ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի և զարգացման ծրագրերի կատարման հաշվետվության հանրային լուսմների վերաբերյալ

Հանրային լուսմները սկսվեց 2019 թվականի փետրվարի 24-ին ժամը 11⁰⁰-ին, համայնքապետարանի դահլիճում:

Հանրային լուսմները արձանագրում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գասպարյանը:

Համայնքի բյուջեի քննարկմանը ներկա են համայնքում գործող հասարակական կազմակերպությունների (Վորլդ Վիժն կազմակերպություն, Համայնքների ֆինանսիստների միություն, Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն) ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, հաշվապահներ, այլ աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ և համայնքի բնակիչներ:

Ողջույնի խոսք ասաց համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Իվանյանը:

Հաշվետվության ֆինանսական մասը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնի պետ Գրետա Թունյանը: Մյուս բնագավառների հետ կապված հաշվետվությունը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Իվանյանը:

Ներկայացնելուց հետո քննարկման մասնակիցները տվեցին իրենց հետաքրքրող հարցերը:

Հարց. Կարեն Հովհաննեսյան, Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնի տնօրեն.

- Հաշվետվության մեջ ներկայացրեցիք, որ կան խնայողություններ, ինչի՞ց են առաջացել դրանք:

Պատասխան . Գ. Թունյան- ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնի պետ.

- Խնայողությունների մի մասը առաջացել են հետաձգված սուբսիդիոն ծրագրերի կատարումից (եղանակային պայմաններից), մի մասն էլ գնումների արդյունքում, ինչպես նաև համայնքի թվով երկու ՆՈՒՀ-երում տարվա սկզբում մեկ ամիս վերանորոգման աշխատանքներ են կատարվել:

Առաջարկություն. Կարեն Հովհաննեսյան, Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնի տնօրեն.

- Քանի որ որակական և ֆինանսական շատ լավ տվյալներով ծրագրեր են կատարվել համայնքի տարբեր բնակավայրերում, ապա կարելի է դրանք հրապարակել:

Արձագանքեց. Վ. Իվանյան, համայնքի ղեկավարի տեղակալ

- Համաձայն ենք Ձեր հետ, այդպես էլ կվարվենք:

Հարց. Հովիկ Իսաջանյան. Սիսիան քաղաքի բնակիչ.

- Որոտնավան բնակավայրի մի հատվածում ոռոգման համակարգը միշտ նորմալ չի գործել: Իրականացված ծրագրում կար Որոտնավան բնակավայրի ոռոգման ցանցերի վերանորոգում, արդյո՞ք կարգավորվել է այդ խնդիրը:

Պատասխան . Վ.Իվանյան, համայնքի ղեկավարի տեղակալ.

- Այո, նաև այդ հատվածն էլ է վերանորոգվել:

Հարց. Գեղամ Օհանյան, Նժդեհ բնակավայրի վարչական ղեկավար.

- Նախորդ ծրագրերում կար բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ, հեռավոր բնակավայրերի շատ առանձնատների տանիքներ ուժեղ քամիների հետևանքով վնասվել են, հնարավոր չէ՞ դրանց վերանորոգման համար էլ գումարներ տրամադրել:

Պատասխան. Վ.Իվանյան, համայնքի ղեկավարի տեղակալ.

- Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները կատարվել են սուբսիդիոն ծրագրերի միջոցով, իսկ առանձնատների տանիքների հետ կապված սոցիալապես անապահով ընտանիքները միայն կարող են դիմում ներկայացնել, և եթե կհամապատասխանեն պահանջվող չափորոշիչներին, ապա հարցը կներկայացվի ավագանու քննարկմանը:

Հարց. Վահան Ղազարյան, Շաքի բնակավայրի վարչական ղեկավար.

- Մեր համայնքի բնակավայրերում կան 5 և ավելի երեխա ունեցող բազմազավակ ընտանիքներ, համայնքի կողմից ի՞նչ օգնություններ կարող են ակնկալել նրանք:

Պատասխան. Վ.Իվանյան, համայնքի ղեկավարի տեղակալ.

- Պետությունը ստանձնել է բազմազավակ ընտանիքների աջակցության խնդիրը, սակայն էլի եթե նրանց մեջ կան սոցիալապես անապահով ընտանիքներ, կարող են դիմել համայնքին, և եթե կհամապատասխանեն պահանջվող չափորոշիչներին, ապա կտրամադրվի որոշակի միանվագ դրամական օգնություն:

Մասնակիցների կողմից այլ հարցեր չեղան հաշվետվության վերաբերյալ:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Իվանյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին լուսններին մասնակցության, քննարկումների և դիտարկումների համար:

Համայնքապետարանի աշխատակազմի

քարտուրմ



Վ. Միրաբյան

Արձանագրեց՝

Համայնքապետարանի աշխատակազմի

Ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-

տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ

Ն. Գոսպարյան

Ք. Սիսիան

24.02.2020թ.

ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Միսիանի համայնքի 2019 թվականի բյուջեի փաստացի եկամուտները պլանավորված 1537018.265 հազար դրամի դիմաց կազմել են 1533316.303 հազար դրամ: Եկամուտների կատարողականը կազմել է 99.76%:

Վարչական բյուջեի եկամուտները պլանավորված 1110608.380 հազար դրամի դիմաց կատարվել են 1110460.253 հազար դրամով, կատարողականը՝ 99.9%:

Ֆոնդային բյուջեի եկամուտները պլանավորված 528954.862 հազար դրամի դիմաց կատարվել են 499303.305 հազար դրամով, կատարողականը 94.4%:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարողականը կազմել է 98.6 %՝ 361722.8 հազար դրամ, որը կազմում է բյուջեի եկամուտների 23.5%-ը:

Համայնքի բյուջեի ծախսը պլանավորված 1794139.4 հազար դրամի դիմաց կազմել է 1467889.3 հազար դրամ, կատարողականը՝ 81.8%:

Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսը կազմել է 592776.3 հազար ՀՀ դրամ, որը կազմում է ընդամենը ծախսի 40.4%-ը: Սա նշանակում է, որ համայնքի կողմից կատարված ծախսերի 40.4%-ի չափով ավելացել է համայնքային սեփականության գույքի արժեքը:

2019 թվականին իրականացված աշխատանքների շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել, որի արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Հայաստանի համայնքների միության կողմից հայտարարված «Տարվա լավագույն համայնք» ամենամյա մրցանակաբաշխության շրջանակներում Միսիանի համայնքն արժանացել է Հայաստանի 2019 թվականի «Նշանակալից առաջընթաց» անվանակարգով մրցանակին:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Պետական և համայնքային միջոցների համաֆինանսավորմամբ իրականացվել են.

- **Լուսավորության համակարգի կառուցում** – տեղադրվել է ընդամենը 534 հենասյուն, **80363.403** հազար դրամ արժողությամբ, որից համայնքային բյուջեից ֆինանսավորում՝ **33464.641** հազար դրամ, պետական բյուջեից՝ **46898.761** հազար դրամ, ինչի շնորհիվ համայնքում երթևեկության անվտանգության մակարդակը աճել է:

Ըստ բնակավայրերի.

Միսիան քաղաքում՝ 160 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **26310.498** հազար դրամ,

Վաղատին բնակավայրում՝ 77 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **11014.270** հազար դրամ,

Բալաք բնակավայրում՝ 46 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **7235.673** հազար դրամ,

Իշխանասար բնակավայրում՝ 50 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **7195.950** հազար դրամ,

Լոր բնակավայրում՝ 28 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **3958.201** հազար դրամ,

Անգեղակոթ բնակավայրում՝ 80 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **11234.541** հազար դրամ,

Շաղատ բնակավայրում՝ 92 հենասյուն և ԼԵԴ լուսատու, **13414.270** հազար դրամի:

- **Կ.Դեմիրճյանի անվան այգու և Բռնակոթ բնակավայրի հրապարակի բարեկազմում -111580.932** հազար դրամի աշխատանքներից կատարվել է 88035.059, որից 55943.503 հազար դրամ համայնքային բյուջեից, 32091.556 հազար դրամ պետական բյուջեից, որի արդյունքում համայնքում կստեղծվի հանգստի և ժամանցի անցկացման պայմաններ:

Ըստ բնակավայրերի.

Միսիան քաղաքում՝ Կ.Դեմիրճյանի այգում կատարվել են **17275.090** հազար դրամի բարեկարգման աշխատանքներ և ձեռք են բերվել **51807.0** հազար դրամի թվով 4 կառույցներ, որոնց տեղադրման աշխատանքները ընթացքի մեջ են:

Բռնակոթ բնակավայրում կատարվել են **18952.970** հազար դրամի բարեկարգման աշխատանքներ:

- **Միսիան քաղաքում փողոցների ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ – 156056.068** հազար դրամի փողոցների ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ, որից համայնքային բյուջեից ֆինանսավորում՝ **73098.677** հազար դրամ, պետական բյուջեից՝ **26168.786** հազար դրամ, որոնց շնորհիվ համայնքում բարելավվել է անվտանգ երթևեկության մակարդակը:

Ավարտվել են Խանջյան փողոցի 800քմ բարեկարգումը և դեպի համայնքային նոր գերեզմանատուն տանող 1500քմ ճանապարհահատվածի ասֆալտապատումը:

Մյասնիկյան-Արամ Մանուկյան-Շահումյան փողոցների ճանապարհային հատվածների 872մ ասֆալտապատման աշխատանքները ընթացքի մեջ են:

- **Քազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում – 103446.241** հազար դրամ արժողությամբ, որից համայնքային բյուջեից ֆինանսավորում՝ **49077.031** հազար, պետական բյուջեից՝ **54369.209** հազար դրամ, որի արդյունքում բարելավվել է 836 բնակչի կենցաղային պայմանները:
Ըստ բնակավայրերի.
Դաստակերտ բնակավայրում վերանորոգվել է 5 բազմաբնակարան բնակելի շենքի տանիք՝ **25849.738** հազար դրամ,
Սիսիան քաղաքում վերանորոգվել է 7 բազմաբնակարան բնակելի շենքի տանիք՝ **77596.503** հազար դրամ:
- **Ոռոգման ջրագծի կառուցում – 213697.932** հազար դրամի ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքներից կատարվել է **122439.620** հազար դրամի, որից **76371.669** հազար դրամ համայնքային բյուջեից, **46067.951** հզար դրամ պետական բյուջեից, որի արդյունքում կավելանա ոռոգվող հողերի տեսակարար կշիռը համայնքում:
Ըստ բնակավայրերի՝
Բոնակոթ բնակավայրում իրականացվել է **34004.680** հազար դրամի աշխատանքներ, **Որոտնավան բնակավայրում՝ 51350.916** հազար դրամի աշխատանքներ,
Անգեղակոթ բնակավայրում՝ 37084.024 հազար դրամի (աշխատանքները ընթացքի մեջ են):
- Նար-Դոս 5 շենքի աստիճանավանդակի կապիտալ վերանորոգման աշխատանքներն ավարտվել են (ընդամենը 24995.940 հազար դրամ):
- **Տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ** իրականացվել է Սիսիան քաղաքի Դուրյան 2 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ՝ 8137.400 հազար դրամ:
- **Տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքապետարանի միջև** կնքվել է 250020.0 հազար դրամի տեխնիկայի ձեռքբերման դրամաշնորհի պայմանագիր, որից 12501.0 հազար դրամ համայնքի ներդրում: Տրվել է գրեյդեր և ՈՒԱՀ մեքենաներ, որի արդյունքում կբարելավվի կոմունալ ծառայությունների որակը:
- **«Կամրջակ» բարեգործական հասարակական կազմակերպության և համայնքապետարանի համաֆինանսավորմամբ** Մուցք բնակավայրում կառուցվել է 2,5կմ երկարությամբ ոռոգման ջրագիծ՝ 18978.0 հազար դրամ արժողությամբ, որից համայնքային բյուջեից ֆինանսավորում՝ 7972.0 հազար դրամ, կազմակերպության կողմից՝ 11006.0 հազար դրամ, որի արդյունքում բնակավայրում կավելանա ոռոգվող հողատարածքները:
- **«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի և Սիսիանի համայնքապետարանի** համաֆինանսավորմամբ իրականացվել է աղբավայրի ցանկապատում 4290.0 հազար դրամ արժողությամբ, որից 3 միլիոն՝ համայնքի ներդրում, 1290.0 հազար դրամ՝ «Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամի ներդրում:
- **«Մարդկային անվտանգության ապահովման ծրագրերի համար դրամաշնորհային աջակցություն» ծրագրի շրջանակում «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի և Սիսիանի համայնքապետարանի** համագործակցության արդյունքում ձեռք է բերվել թվով 98 պլաստմասե աղբաման 10584.0 հազար դրամ արժողությամբ, որից 1944.0 հազար դրամ համայնքային բյուջեից ներդրում, 8640.0 հազար դրամ Ճապոնիայի դեսպանատան ներդրում:
- **«Վայրի բնության և մշակույթային արժեքների պահպանման» հիմնադրամի կողմից** կառուցվել է լուսավորության համակարգ Վաղատին և Լոր բնակավայրերում, ընդամենը 14622.5 հազար դրամ արժողությամբ, որից Վաղատին բնակավայրում տեղադրվել է 37 հենասյուն, 7768.3 հազար դրամի, Լոր բնակավայրում տեղադրվել է 27 հենասյուն՝ 6654,4 հազար դրամի, 32 լուսատու:
- **«Քոնթուր Գլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ի կողմից** կառուցվել է լուսավորության համակարգ Լծեն բնակավայրում, ընդամենը 8280.0 հազար դրամի 43 հենասյուն, որի արդյունքում բնակավայրում ապահովվել է անվտանգ երթևեկություն:
- Կատարվել են թվով 23 հետիոտնային անցումների գծանշման աշխատանքներ, որի արդյունքում բարելավվել է անվտանգ երթևեկության մակարդակը:
- Համայնքի մի շարք բնակավայրերում իրականացվել են դաշտամիջյան, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների խճով փոսալցման և հարթեցման աշխատանքներ,
- Սիսիանի համայնքի մի շարք բնակավայրերում իրականացվել են խմելու ջրի և ոռոգման ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Սիսիան քաղաքից, Բոնակոթ, Ույծ, Տոլրոս, Աշոտավան, Նորավան, Հացավան բնակավայրերից, Գորայք համայնքից հավաքվել և աղբավայր է տեղափոխվել 6275տ կենցաղային աղբ:
- Իրականացվել է համայնքի գիշերային լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքներ, էներգախնայող լամպերը փոխարինվել են լեդ լամպերով:
- 2019 թվականի ապրիլ և սեպտեմբեր ամիսներին համայնքում կազմակերպվել են շաբաթօրյակներ:

Սիսիանի համայնքի ավագանու կողմից հաստատվել են թվով 25 հողօգտագործման սխեմաներ համայնքի տարբեր հատվածներում հետագայում կառուցապատումներ իրականացնելու նպատակով:

Ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է 13 միավոր հողամաս:

Աճուրդով օտարվել է 27 միավոր հողամաս:

Կառուցապատման իրավունքով առանց մրցույթի տրամադրվել են 12, իսկ մրցույթով՝ 3 միավոր հողամասեր:

2019 թվականի ընթացքում հայտնաբերվել է 8 ապօրինի շինարարություն, որոնց վերաբերյալ իրականացվել է վարչական վարույթ:

Հնարավորություն է տրվել թվով 38 քաղաքացիների ինքնական կառույցները օրինականացնելու, նաև թվով 14 քաղաքացիների տնամերձ հողամասերին կից ավել տիրապետվող հողամասերը սեփականություն ճանաչելու համար:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՈՐՏ

- Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի 12 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 3600.0 հազար դրամ, և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ: Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկի վաճառքի իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի 7 որոշում՝ համայնքային բյուջե մուտքագրելով 420.0 հազար դրամ, և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ:
- Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 15 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 454.0 հազար դրամ, և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ:
- Ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 120 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 6392.0 հազար դրամ, արտաքին գովազդ տեղադրելու համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 36 որոշում՝ 3061.0 հազար դրամ մուտքագրվել է համայնքի բյուջե:
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի համար կայացվել է համայնքի ղեկավարի 5 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 250.0 հազար դրամ և տրամադրվել են համապատասխան թույլտվություններ:
- Բացօթյա առևտրի իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 2 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 20.0 հազար դրամ:
- Քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարությունների իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 1 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 500.0 հազար դրամ:
- Ժամը 24:00-ից հետո վիճակախաղերի իրականացման թույլտվության համար կայացվել է համայնքի ղեկավարի թվով 1 որոշում՝ համայնքի բյուջե է մուտքագրվել 100.0 հազար դրամ և տրամադրվել է համապատասխան թույլտվություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2019 թվականին գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքների շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել և իրականացվել է՝

- **Գյուղտեխնիկայի ձեռքբերում** /բելառուս տրակտորներ - 3 հատ, շարքացան - 1հատ, կցորդ - 2 հատ, խոզանակ - 2 հատ, խոտհավաք - 1 հատ, խոտինձիչ - 1 հատ, խոտի մամիչ - 1 հատ, կոշ - 2 հատ/ - **41729.400** հազար դրամ արժողությամբ, որից համայնքային բյուջեից ֆինանսավորում՝ **18778.230** հազար դրամ, պետական բյուջեից՝ **22951.170** հազար դրամ, որոնց օգտագործմամբ բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը կբարձրանա 20%-ով:
- Արտավայրերի և խոտհարքների վարձակալության պայմանագրերի կնքում՝ թվով 51, 1386հա:
- Համայնքային սեփականություն հանդիսացող 60.6498հա վարելահողերի վարձակալություն՝ բաց մրցույթով:
- Շաղատ բնակավայրի հողերի թվով 29 վարձակալության պայմանագրերի ժամկետների երկարաձգում:
- Անճշտությունների ուղղում կադաստրի բազայում՝ թվով 50 դիմում-բողոքների հիման վրա:
- Կադաստրային բազայում ուղղում կատարելու համար պետական կոմիտե է ուղարկվել Շաքի, Մուցք, Նժդեհ, Բալաք և Բոնակոթ բնակավայրերում առկա խնդիրները:
- Անասունների հակահամաճարակային և ախտորոշիչ միջոցառումներ պետ-պատվերի շրջանակում:
- Գարնանացանի և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի վերաբերյալ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել ամենամսյա ամփոփ հաշվետվություն:
- 294կգ մկնդեղի բաշխում:

- 200 տոննա ազոտական պարարտանյութի և 19995կգ գարու, 264կգ առվույտի, 3900կգ կորնզանի սերմացուի բաշխում համայնքի բնակիչներին՝ 2019 թվականի գարնանացանի աշխատանքները կատարելու համար:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՄՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒ**

2019 թվականին իրականացված աշխատանքների շնորհիվ նկատելի առաջընթաց է ապահովվել համայնքի կրթական, մշակութային և սպորտի բնագավառում, այդ բնագավառում իրականացվել են մեծածավալ աշխատանքներ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սիսիանի համայնքում գործում է թվով 4 ՆՈՒՀ՝ 39 խմբով, որտեղ հաճախում են 836 երեխա, աշխատում է 226 հոգի: Նախադպրոցական կրթության ծառայություն մատուցվում է համայնքի թվով 16 բնակավայրում՝ Անգեղակոթ, Շաղատ, Աղիտու, Դարբաս, Շամբ, Նորավան, Ույծ, Աշոտավան, Հացավան, Բնունիս, Տորունիք, Թասիկ, Տոլորս, Շաքի, Բոնակոթ, Լոր:

«Focus on children now» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից թիվ 1 ՆՈՒՀ-ի տարածքում տեղադրվել է խաղահրապարակ: Մանկապարտեզին տրամադրվել է նաև 60 մահճակալ, 60 ներքնակ, իսկ Անգեղակոթ բնակավայրում գործող խմբին Վորլդ Վիժն կազմակերպության կողմից տրամադրվել է 6 երկհարկանի մահճակալ:

Գրեթե ամբողջովին թարմացված է թիվ 1 ՆՈՒՀ-ի գույքը:

Վորլդ Վիժն կազմակերպության կողմից Դարբաս բնակավայրում գործող խմբին հատկացվել է 10 մահճակալ:

Թիվ 2 ՆՈՒՀ-ը ձեռք է բերել 30 ներքնակ, 92 մանկական սպիտակեղեն, 30 անկողնային ծածկոց, համակարգիչ, կարի մեքենա, տպիչ սարք, սառնարան /Աղիտուի մանկապարտեզի համար/, 13 երկհարկանի մահճակալ Նորավանի մանկապարտեզի համար:

«Սիսիանի համայնքի թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը ձեռք է բերել համակարգիչ, գազի ջրատաքացուցիչ, գազօջախներ /Ույծի և Տոլորսի խմբերի համար/, 2 էլ.տաքացուցիչներ /Աշոտավանի և Բնունիսի խմբերի համար/:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության «Ջայկա» կազմակերպության ֆինանսավորմամբ թիվ 4 ՆՈՒՀ-ում տեղադրվել են արևային պանելներ և ջրատաքացուցիչ:

Մանկապարտեզը ձեռք է բերել 110 կոմպլեկտ սպիտակեղեն, խոհանոցային կոմբայն:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐ

Սիսիանի համայնքի ենթակայությամբ գործում են թվով 5 արտադպրոցական կառույցներ.

- «Էմմա Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում սովորում է 164 աշակերտ և աշխատում 34 աշխատակից:
Դպրոցի» սաները մասնակցել են «Վերածնունդ» միջազգային XI մրցույթ-փառատոնին, արժանացել՝ դիպլոմների, շնորհակալագրերի և դափնեկրերի կոչման:
Դպրոցում կազմակերպվել են տարվա հոբբեյանական համերգներ նվիրված Մանսուրյանի 80, Ամիրխանյանի 70, Թումանյանի և Կոմիտասի 150 ամյակներին:
«Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի կողմից 2019թ նոյեմբերի 14-ին երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով անցկացվել է մրցույթ, որի արդյունքում հաղթողներին տրվել են փողային նվագարաններ, իսկ դպրոցին՝ դաշնամուր:
- Սիսիանի «Ձ.Ա.Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում սովորում է 92 աշակերտ և աշխատում 18 աշխատակից: Սիսիանի «Ձ.Ա.Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում կատարվել են վերանորոգման աշխատանքներ:
- Սիսիանի «Շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ն ունի 86 աշակերտ և 9 աշխատող: Դպրոցի համար ձեռք է բերվել շախմատային գույք և կատարվել են գույքի վերանորոգման աշխատանքներ:
- Սիսիանի «Ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ն ունի 80 աշակերտ և 8 աշխատող:
- «Ա.Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ն ունի 197 սան և 28 աշխատող: Կենտրոնի մարզական խմբի սաները մասնակցել են Երևան քաղաքում անցկացված հանրապետական սպարտակիադային, ուսանողական մրցույթ-փառատոնին և արժանացել գավաթի, հավաստագրերի, պատվոգրերի: Հայկական ժողովրդական պարերի «Մողեռն» համույթը մասնակցել է

Երևան քաղաքում կայացած Մինորա մշակութային կենտրոնի կազմակերպած հանրապետական մրցույթ-փառատոնին, սաները արժանացել են անհատական պատվոգրերի և զբաղեցրել 2-րդ պատվավոր տեղը:

«Էներջի-Դանս» ժամանակակից պարային խումբը մասնակցել է Երևան քաղաքում կայացած «Տարբեր ազգերի պարեր» համերգ-փառատոնին, Պարի Միջազգային օրվան նվիրված փառատոնին, Դիլիջան քաղաքում կայացած «Արվեստի կամուրջ» մրցանակաբաշխությանը, Էջմիածին քաղաքում կայացած «Արվեստի կամուրջ» հանրապետական համերգ-փառատոնին, ցուցաբերել են փայլուն մասնակցություն և արժանացել զավաթի, շնորհակալագրերի և պատվոգրերի:

ՀՀ պետական, մասնագիտական տոների, հիշատակի օրերի և երիտասարդների ժամանցի հետ կապված Սիսիան քաղաքում և համայնքի բնակավայրերում կազմակերպվել են նորովի մոտեցմամբ ավելի քան 52 միջոցառումներ, մասնավորապես՝ Ամանորին նվիրված հանդիսություններ Սիսակ Նահապետի անվան հրապարակում, Բանակի օրվան նվիրված միջոցառում, «Տեառնընդառաջ», Վարդավառի տոն, Կանանց միամսյակ, Մեծանուն գրող Համո Սահյանին 105 ամյակին նվիրված միջոցառումների շարք, Մշակույթի միջազգային օրվան նվիրված միջոցառում, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր, Սուրբ Զատիկ, «Ինչու է ցավս մանուշակագույն» խորագրով միջոցառում՝ Մեծ Եղեռնի 104-րդ տարելիցին նվիրված, Մայիսյան եռատոն, համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ անցկացվեց «Մեր հաղթական օլիմպիականները» խորագրով միջոցառում, Վերջին զանգին նվիրված միջոցառում, Հանրապետության տոնին և զոհված ազատամարտիկ Վուրգ Ոսկանյանի ծննդյան տարեդարձին նվիրված միջոցառումներ, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում, «Ուրախ ամառ» միջոցառումների շարք, որի ընթացքում կազմակերպվել են ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, ցուցահանդեսներ, սպորտային միջոցառումներ, բացօթյա կինոդիտումներ և համերգ-դիսկոտեկներ, ազգային պարերի ուսուցում, որի արդյունքում ձևավորվեց «Որոտնա» ազգային երգ ու պարի համույթը, մասնագիտական տոներ՝ Ոստիկանի տոն, Բուժաշխատողի օր, Ուսուցչի օր, Փրկարարի օր, Գրադարանավարի օր, Երիտասարդության միջազգային օր, Ժողգործիքների համույթի մասնակցությամբ անվճար համերգներ համայնքի բնակավայրերում: Սիսիանի համայնքը շարունակում է իր մշակութային փառատոնը՝ դրանք զուգակցելով ծառատունկերով և շաբաթօրյակներով:

2019 թվականին «ԵՄ-ն հանուն երիտասարդության. հմտություններ ապագայի համար» ծրագրի շրջանակում հայտարարված համայնքային փոքր ենթադրամաշնորհային ծրագրերի մրցույթի շրջանակում Սիսիանի համայնքապետարանի, Վորլդ Վիժն Հայաստան և «Օքսիջեն» հիմնադրամի համաֆինանսավորմամբ Սիսիանում իրականացել է «Գործենք միասին» ծրագիրը, որի արդյունքում համայնքը ստացել է 2 հատ սեղանի թենիսի դաշտ:

Սիսիանցի տաղանդաշատ երեխաներին այլ բեմերում տեսնելու, նրանց մասնագիտական հմտությունների զարգացման, փորձի ձեռքբերման և մեծ շփման նկատառումներով ապահովել է նրանց մասնակցությունը միջազգային փառատոններում:

Կազմակերպել են սպորտային-առողջարարական մասսայական միջոցառումներ և մրցաշարեր՝

- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրապետության 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիա՝ մարզական միջոցառում.
- Սիսական գնդի կազմավորման 25-րդ տարեդարձին և Վազգեն Սարգսյանի ծննդյան 60-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի բազկամարտի բաց առաջնություն.
- Սիսիանի համայնքից Հայաստանի Հանրապետության և Արցախի սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված վոլեյբոլի հուշամրցաշար.
- Հանրապետության տոնին նվիրված ֆուտբոլի մրցաշար.
- ԱԺ զավաթի խաղարկություն.
- «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» սպորտլանդիա.
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ.
- ՀՀ և մայիսյան հերոսամարտերի 101-ամյակին նվիրված ՀՀ դպրոցականների «Դիպուկ հրաձիգ» հանրապետական մրցույթ.
- Ֆիզկուլտուրայի օրվան նվիրված բազկամարտի մինչև 18 տարեկանների բաց առաջնություն.
- Սեղանի թենիսի մրցաշար.
- Մասնակցություն ամառային 7-րդ համահայկական խաղերին.
- 2019 թվականին անցկացված տարեցների հանրապետական խաղեր.
- Անկախության տոնին նվիրված մարզական փառատոն /յոթ մարզաձևերից/.
- Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրապետության հանրակրթական դպրոցների 8-ից 12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա՝ մարզական միջոցառում.

➤ Ազատամարտիկ Արշակ Գրիգորյանի անվան վոլեյբոլի հուշամրցաշար:

Տրվել են դրամական մրցանակներ, պատվոգրեր, շնորհակալագրեր և հավաստագրեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջոցներ են ձեռնարկվել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին: Աշխատանքներ են տարվել համայնքում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են տնային այցելություններ, ուղղորդել նրանց սոցիալական աջակցության տարածքային մարմիններ և մասնագիտացված այլ կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին տեղեկանալու և ծառայություններից օգտվելու համար, ներկայացրել կառույցների գործունեության ոլորտը, աջակցության և մատուցվող ծառայությունների տեսակները, ձևերը:

Սոցիալական աջակցություն է ցուցաբերվել Սիսիան քաղաքի 41 /քառասունմեկ/ և բնակավայրերի 27/քսանյոթ/ ընտանիքների և տրամադրվել է դրամական օգնություն՝ 2 975 000 /երկու միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամի չափով, ինչպես նաև սոցիալական աջակցություն՝ հագուստի, վառելափայտի, շինանյութի տեսքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ, ԱՎԱԳԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐՑ

- 2019թ. ընթացքում տեղի է ունեցել ավագանու 10 հերթական և 4 արտահերթ նիստ: Ընդունվել են ավագանու 98, համայնքի ղեկավարի 970 որոշումներ, կայացվել են համայնքի ղեկավարի 330 կարգադրություններ, աշխատակազմի քարտուղարի 288 հրամաններ:
- Կայացվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 8 ու սոցիալական և բնակարանային հարցերի հանձնաժողովի 20 նիստեր:
- Քաղաքացիներից և իրավաբանական անձանցից ստացվել են 712 դիմումներ, որոնց սահմանված կարգով ընթացք է տրվել:
- Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվել է 282 քաղաքացիների ընդունելություն:
- Համայնքային ենթակառուցվածքային 12 կազմակերպություններում իրականացվել է ներքին աուդիտ:
- Համայնքապետարանի անմիջական միջնորդությամբ տարբեր զորամասերում պայմանագրային զինծառայության են ընդգրկվել պահեստազորի զինապարտ քաղաքացիներ:
- Համայնքապետարանի ողջ անձնակազմը մասնակցել է «Զինված ուժերի ծավալումը, հակառակորդի ագրեսիայի դիմագրավումը» թեմայով լայնածավալ ռազմավարական զորավարժությանը:
- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Հացավան, Թասիկ, Արևիս, Ախլաթյան, Տոլորս և Բոնակոթ բնակավայրերում անց է կացվել շտաբային ուսումնավարժություն «Ուժեղ սելավների, գետերի վարարումների և հեղեղումների դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը» թեմայով, իսկ Շամբ բնակավայրում՝ շտաբային ուսումնավարժություն «Երկրաշարժի դեպքում բնակչության գործողությունները և առաջին օգնության ցուցաբերումը տուժածներին» թեմայով:
- Սիսիանի համայնքի համար մշակվել և կազմվել է «Համայնքի աղետների ռիսկերի կառավարման պլան»: Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող «Աղետների ռիսկի նվազեցման դաշինք» (ALTER) ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ԱՌՆԱՊ հիմնադրամի և ԱԻՆ Փրկարար ծառայության հետ համատեղ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում, այդ թվում Սիսիան քաղաքում և Շաղատ, Բալաք, Ույծ, Որոտնավան բնակավայրերում անց է կացվել «Սիսիանի համայնքում ուժեղ երկրաշարժի և երկրաշարժի հետևանքով Սպանդարյան ջրամբարի պատվարի փլուզման դեպքերում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը» թեմայով դաշտային ուսումնավարժությունը:
- Իրականացվել է համայնքային ենթակառուցվածքային թվով 4 ՀՈԱԿ-ների միացման ձևով վերակազմակերպում:
- Աշխատանքներ են տարվել համայնքում բնակարանային հաշվառման վերցված հաշմանդամ և զոհված զինծառայողների փաստաթղթերի կարգավորման ուղղությամբ:
- Տուրիզմի զարգացման բնագավառում նախանշվել են համապատասխան ծրագրեր: Պահպանվել են կապերը քույր քաղաքների՝ Հունաստանի Նեա Զմինիայի և Ֆրանսիայի Մոնտելիմարի հետ: Սիսիանի համայնքի ղեկավարը փոխադարձ այցով հյուրընկալվել է Մոնտելիմարում:
- Համայնքապետարանը համագործակցում է մի շարք միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ: